

ՀԱՅ ԻՐԱՆԿԱԳԻՐԻ ԳԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻ ԱՆՏԻՊ ԲՆԱԳԻՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Հայ ժառանգորդության ղգալի մասը պահպանվել է միջնադարյան ձեռագրեր-
յում: Դրանք, ճնշող մեծամասնությամբ, հիշատակարաններ, հիշատակագրու-
թյուններ կամ նշումներ են¹: Կան ժառանգորդություններ էլ, որոնք օգտագործվել
են քաղաքական նպատակներով: Այդպիսի փաստ է հիշվում Արդար Դպիր Թո-
խաթևցու (XVI դ.) Հռոմ կատարած ուղևորության առիթով, երբ Հռոմի պապին
է ներկայացվել էջմիածնի կաթողիկոսի գրությունը՝ շարադրված նաև ժառան-
գրով²: Հայտնի են նաև Ներսես Աշտարակցու թղթերը՝ Դավիթ-Դանիելյան վե-
հերի կապակցությամբ, որոնց փայլուն վերծանությունը տվել է հայագետ Գ.
Տեր Մկրտչյանը³: Ուշագրավ փաստ է Տ. Պալյանի ժառանգիրը՝ թաքցված գույ-
քի մասին⁴:

Մասնադեպները վաղուց են նկատել, որ ժառանգորդությունը օգտագործվել
է նաև արհեստավորության շրջաններում և գիտության որոշ բնագավառներում.
հատկապես բժշկության և ալքիմիայի մեջ: Այն մեծ տարածում է ունեցել մա-
նավանդ Թոխաթի և Սեբաստիայի արհեստավորության միջավայրում: Պիտի
նկատել, սակայն, որ դեռևս չեն գտնված ժառանգիր ընդարձակ բնագրեր: Այդ
պակասը և, առհասարակ, ժառանգիր փշրանքների աղքատությունը պիտի բա-
ցատրել ժամանակի սովորություններով: Հ. Աճառյանը վկայում է, որ արհեստա-
վորները, իրենց մասնագիտական մենաշնորհը խստորեն պահպանելու նպա-
տակով հետևողականորեն ձգտել են, որ գաղտնիքը շտարածվի: Նրանք իրենց
աշակերտներից երդում են վերցրել, որպեսզի վերջիններս գաղտնապահ լինեն:
Այս առումով ուշագրավ է ալքիմիական մի գրչագրի հետևյալ վկայությունը.
«Վարդապետքն և երգողքն արուեստիս մըթվին և տարակուսիւք խօսեալ են, զի
ևթէ յայտնի և պարզ խօսեալ էին՝ ամենեքեան իմանային և ուսուցանէին, և
արուեստս այս անա[ր]ժէք լինէր: Եւ կամ պատճառ մի այլ կայ, զի մի՞ ոք
զկնի իմաստնասիրացն ընդեռնուր և վասն նախանձու այրէր և կամ կորուսա-
նէր»⁵: Ձեռագրի հիշատակարանում գրիչը նորից է հիշեցնում, թե սա ժառանգ
է պահուելի»⁶:

Ահա այս ընդհանուր վիճակի մեջ իր ուրույն տեղն ունի Մաշտոցի անվան
Մատենադարանի № 9758 ձեռագիրը, որի սկիզբը (թերթ՝ 5—19) ամբողջապես
ժառանգիր է և բովանդակում է ալքիմիական իմացություններ: Ճիշտ է, այն

1 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959:

2 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 194:

3 Տե՛ս «Արարատ», 1888, № 1, էջ 35—49:

4 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 214—215:

5 ՀԱՄԼ Միևիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ
(Մատենադարան), ձեռ. № 8446, Թ. 8ա-բ:

6 Նույն տեղում, Թ. 141ա:

գրված է 1814 թ., սակայն նյութն ավելի հին է՝ հավաքված «ի նախկին փիլիսոփայից»⁷։ Խորագիրը հայատառ է, որոշ ծածկագրություններով. «Գիրք արևստականաց հրանալելեաց (ծածկագիր), որ է փմիայից (ծածկագիր)՝ սանժանեալ ի նախկին փիլիսոփայից ի վերայ է մոլորականաց աստեղեաց։ Ժողովեալ եկև ալժմ ի բանասիրէ յումեմնէ Աւետիք (գավազանագիր) վարդապետէ Բաղիշեցույ, որ ասի Սալանաձորձի. ի հայրապետութեան գերակայ արքունոյն էջմիածնի տեսուն նրեմ սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց. ի թուին հայոց ՌՄԿԳ-ին և յամի տեսուն 1814-ին և նոյեմբերի Թ օրն»⁸։

Մեղ հետաքրքրող նյութը ունի նաև փորձանոթների և գործիքների գծագրություններ (թ. 5բ, 10ա)։ Բնագիրը բաժանված է առանձին փոքրիկ մասերի, համապատասխան հայատառ ենթախորագրերով, ուր կան ծածկագիր տառեր ու բառեր։ Խորագրում և բնագրում յոթ մոլորակների անունները նշված են միջնադարում ընդունված գաղափարանշաններով։ Բնագրի հնության առումով, խորագրում եղած հիշատակությունից բացի, կան օժանդակ տվյալներ ևս։ Օրինակ, գրչագրում կարդում ենք. «...աղն, որ յիշէ գիրքս»։ Այստեղ հեղինակը նկատի ունի իր օգտագործած աղբյուրը կամ աղբյուրներից մեկը։

Քիմիկոս մասնագետներին թողնելով № 9758 ձեռագրի ծածկագիր նյութի քննությունը, մենք այստեղ ներկայացնում ենք ենթախորագրերի ցանկը.

- | | |
|---|--|
| 6ա— Սկիզբն արուեստաւորաց արսի-
րագործից, օգնականությամբն
աստուծոյ | 8բ — Զաֆրան երկաթի պատական
— Գողի պատրաստումն
— Գողի աղ
— Աղ սալտար քարի |
| — Լուացումն աղի, զոր ի գործ
ածեմք, որ ասի աղ ք[ա]հա-
նայից | 9ա— Աղ սալտէ կաճիտելու կոչի
— Աղ ղլէգարի
— Սանիտր. բորակի աղն է
— Պատրաստումն քացախի
— Մաքրումն քիւբիրդի |
| — Լուացումն նշատրի
— Լուացումն բորակի | 9բ — Յաղաքս պարզելոյ զառիկին
— Երկաթ օսկեշրել
— Զուր արծաթի
— Իւղ կոկորդի |
| 6բ — Լկացուցանել ամենայն աղերաց
պաղլեղից թէ շաբ, թէ զաշ
— Լկացուցանել նշտարի և կամ
այլ աղերաց
— Եւ կամ այսպէս արա | 10ա— Թինքար
— Դուռն լուսին շինելոյ |
| 7ա— Կիր հաւկթի
— Երկաթի ժանգ, որ ասի ախ-
բերաց արիւն
— Ժանգառ շինել
— Երկաթի զաֆրան շինել | 10բ — Դուռն արեգական փոքր
— Յած արծաթ
— Դուռն արեգական, աստուծով
— Դուռն լուսնի, աստուծով |
| 7բ — Կարմրացուցանել զաշի
— Ալասիֆա, որ է ժանգառ
— Թութիա շինել յաղաքս արեգա-
կան | 11ա— Ֆանդ արծաթագործից
— Մէթ նշաթրի |
| 8ա— Նշատր շինելոյ
— Բորակ շինելոյ խրատ | 11բ — Դուռն որ անաւնի աստուծոյ ջուր,
Կեճեփի կրի արծակել |

⁷ Նույն տեղում, ձեռ № 9758, թ. 5ա։ Զեռագիրը ձեռք է բերվել 1958 թ. Լենինականում՝ Արաշյանների ընտանիքից։ Մինչև 1914 թ. այն եղել է Ալաշկերտում։

⁸ Նույն տեղում։

- Բաղնեաց կերպ այս են
12ա— Աքսիր նշատրի
— Վերացուցանել կոկորդի
— Իւղ կոկորդի
— Կոկորդ սպիտակացուցանելոյ
12բ— Յաղաքս սպիտակացուցանելոյ
կոկորթին և զառիկին
13ա— Այլ կերպ
— Յաղաքս թօթիայ շինել[ոյ]
— Դուռն արեգական
13բ— Յաղաքս նըշատըրի, որ հալի
ի հուր
14ա— Յաղաքս պարզելոյ նշաարին
— Լուացումն փայլածուին
— Կալեցուցանել փայլածու վասն
աքսիրի
14բ— Վերացուցանել փայլածուն վա-
սըն արեգական երեւակին
15ա— Վերացուցանել փայլածուն վա-
սըն լուսնի
15բ— Վերացուցանել զառիկի
16ա— Դուռն ոսկոյ և արեգական
— Զարմանալի դուռն վասն արե-
գական գունի
- Դուռն լուսնի գլուխ, աստու-
ծով
16բ— Դուռն ոսկոյ արեգական, աս-
տուծով
17ա— Վերացուցանել կոկորդի
— Վերացուցանել նշատրի
17բ— Փորձ արծաթոյ, աստուծով
18ա— Դուռն ոսկոյ
— Կուց, որ է ծեփ
18բ— Վասն պողպատ շինելոյ
— Եթէ կամիս ջրով կարմիր
պղինձն ոսկեգոյն առնել
— Թէ կամիս շինել այնպիսի
ջուր մի՝ ոսկին առաւել փայ-
լեցընէ
— Թէ կուզես երկաթն կակղցընել
19ա— Դարձեալ ամրցընել երկաթի
— Վասն երկաթն ոսկեգոյն ներ-
կել
— Վասն երկաթն ամրագոյն առ-
նել իբր արծաթ
— Վասն ըաստուիս շինելոյ
19բ— Վասն պողպատ շինելոյ
— Վասն արծաթ շինելոյ

№ 9758 ձեռագրում օգտագործված է «աղուանից» կոչված ծածկագրություն-
ներ (նկ. I): Այլ առիթով նկատել ենք, որ «աղուանիցը» կապ չունի աղավնի
բառի հետ և ծագում է աղվանից հասկացությունից, որովհետև այս կամ այն
չափով կապված է եղել բուն աղվանական գրերի հետ⁹:

Աղվանական կոչված ծածկագրերի հայկական տառերից առաջանալու
հարցադրումը կարելի կլինի ընդունել, եթե այդ ծածկագրերը աղվանական
չկոչվեին և ոչ մի կապ չունենային աղվանական գրերի հետ¹⁰: Բայց, ինչպես
արդեն գիտենք, դրանք կոչվում են աղվանական և առնվազն 6 տառ աղվանական
այբուբենի հետ ունեն այնպիսի հարազատություն, որը մտածել է տալիս նրանց
կապի մասին: Այս պայմաններում հայկական տառերի ունեցած համանմա-
նությունները կարող են բացատրվել երկու պատճառով: Առաջին. քանի որ և՛
հայոց, և՛ աղվանից տառերը ստեղծվել են Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, ստեղ-
ծագործական նույն եղանակով և նույն առաջնից, ապա պարզ է, որ միմյանց
նման կլինեին նաև նրանցից կազմված ծածկագրերը, ինչպես նաև անխուսա-
փելի՝ աղվանական տառերից ստեղծված ծածկագրերի հարազատությունը հա-
յոց այբուբենին: Երկրորդ. դարեր շարունակ աղվանական կոչված ծածկագրերն
օգտագործվելով հայկական միջավայրում, բնականաբար, պիտի հետզհետե-
մոտենային հայկական տառաձևերին և հեռանային աղվանականից, մասնա-

9 ՀՄԸ ԳԱ «Լրաբեր», 1970, № 10, էջ 66—72,

10 Նույն տեղում, № 12, էջ 86—89:

մյանց, մանավանդ որ դարավոր փոփոխությունները երկուստեք զգալի անձանալնալիություն են ենթադրում, իսկ աղվանական փոքրատառերի մասին էլ դեռ հավաստի ոչինչ չգիտենք, չնայած այդպիսիք պիտի լինեն: Ուշագրավ է, որ պրոֆ. Աշ. Աբրահամյանն իր համեմատության նոր տախտակում վերցնում է ոչ թե հայկական երկաթագիր, այլ բոլորգրի փոքրատառեր և դրանց հետ է համեմատում ծածկագրերը¹¹:

Գալով ծածկագրերի քանակին, պիտի ասել, որ, անկախ բուն աղվանական այբուբենի տառերի քանակից (52), հայերը պիտի նրանցից վերցնեն 36—38 տառ, որպեսզի համաձայնեցնեն իրենց լեզվական օրինաչափություններին: Այլապես 52 հնչյունական միավորը հայոց լեզվին չէր համապատասխանի: Այստեղից էլ հարց է առաջանում, ծածկագրության փորձերի ժամանակ հայերը աղվանական այբուբենից նույն տառի համար տարբեր ձիշեր չեն օգտագործել, որի պատճառով էլ այսօր այդ ծածկագիր այբուբենները միմյանցից զգալիորեն տարբերվում են: Թվում է, թե այդ տարբերությունների մեջ կարող է նաև սույն պարագան դեր խաղացած լինել, չնայած նկատելի են տեղական նորանոր հարմարեցումներ, ինչպես և հայկական տառաձևերին մոտենալու հակավածություն:

Նյութի ներկա վիճակը հիմք է տալիս պնդելու, թե աղվանից կոչված ծածկագրերը ինչ-որ չափով ու ձևով կապ ունեն բուն աղվանական տառաձևերի հետ և այդ կապի հետազոտությունն է, որ պետք է շարունակվի:

Այս կապակցությամբ ուշագրավ է Հեթում Պատմիչի (XIII դ.) վկայությունը. «Ազգք բնակեալք յաշխարհին Հայոց զանազան անուամբք կոչին ըստ գաւառաց և ըստ տեղեաց, յորս կանն... Ունին նշանագիրս արամեանս, և այլ ևս՝ որ ասեն հալօցէն (հայոց կամ աղվանից)»¹²:

Մասնագետները նկատել են, որ «Հալօցէն» կամ «Հալօյեն» ասելով պետք է հասկանալ աղվանից¹³, ըստ այդմ՝ պիտի ընդունել, թե Հեթում պատմիչը վկայում է, որ Հայաստանում օգտագործվելիս է եղել երկու գիր. մեկը Արամյան (հայկական), մյուսը՝ Հալօյեն (աղվանից): Եթե այդպես է, ապա հայկական դպրության մեջ պիտի լինեն նաև «Հալօյեն» բնագրեր: Արդյոք աղվանից կոչված ծածկագրերով գրված հայկական «ծածուկ» գրականությունը չէր կարող համարվել «Հալօյեն»: Գուցե և հենց այստեղ է, որ հայոց ծածկագրության «աղուանից» կոչումը գալիս է օգնելու «հալօյենի» հարցի լուծմանը: Անկախ դրանից էլ, սակայն, եզակի կարևորություն է ստանում № 9758 ձեռագրի մատնանշված բնագիրը՝ բացելով աղվանից ծածկագրությամբ գոյություն ունեցած երբեմնի գրականության մի ծայրը: Հիրավի, աղվանից ծածկագրերով գրված այս հուշարձանը, որպես գործնական բնագիր, միակն է երբեմնի այն հարուստ դրականությունից, որը ժամանակին եղել է հայ արհեստավորների, քոփշկների, ալքիմիկոսների, անշուշտ, նաև շինարար վարպետների և իրենց արհեստն ու արվեստը մենաշնորհ դիտող բոլոր անհատների, կազմակերպությունների «ծածուկ» կոչված դպրությունը: Եվ եթե ճիշտ է, որ արհեստավորների և գիտնականների մի վիթխարի հատվածը դարեր շարունակ իր ստեղծագործական փորձի

11 Տե՛ս նույն տեղում, էջ 102—103:

12 «Հեթում Պատմի. Թարգմաց», Վենետիկ, 1842, էջ 14:

13 Տե՛ս Հ. Ա. Բ. ո. յ. ն., Հայոց գրերը, Վիեննա, 1925, էջ 480, ն. Ա. կ. ի. յ. ա. ն., Ս. Մեսրոպ, Վիեննա, 1949, էջ 324—325:

և մտքի վաստակը թղթին է հանձնել ծածկագրերի շնորհիվ, ապա կյանքում այդ ծածկագիրը գրականությունը պիտի որ մեծ դեր խաղար և որոշակի հարըստություն կազմեր:

№ 9758 ձեռագրում առկա տառաձևերը, լինելով աղվանից ծածկագրի ուշ շրջանի նմուշներ, մասամբ պահպանել են իրենց հին տեսքը, մասամբ էլ մոտեցել հայկական տառաձևերին: Առաջին խմբին են պատկանում, օրինակ, ա, ն, ո, պ, ս, տ, լ, և այլ տառեր: Նկատելի է, որ ա-ն ուրիշ ձեռագրերում հանդիպում է պառկած, հաճախ էլ երկկողմանի կեռի նման, իսկ № 9758 ձեռագրում այն, շնչին բացառությամբ, ուղղահայաց դիրքով է (նկ. II, տող 1), որը և համապատասխանում է բուն աղվանական տառաձևին: Ուստի և սույն բնագիրը պահպանել է աղվանական ա տառի ավելի նախնական ձևը: Ուրիշ ձեռագրերում եթե ո-ն եռանկյան ձև ունի (ներքևից մեկ կամ երկու կետ), իսկ ա-ն նույնը՝ հակառակ դիրքով, ապա այստեղ եռանկյունին կլորացած է. ո-ի դեպքում կիրառված է մեկ, ա-ի դեպքում՝ երկու կետ (նկ. II, 2—3): № 9758 գրչագրում օգտագործված լ-ն նույնպես հարազատ է բուն աղվանականին, միայն թե պոչիկն այստեղ գրեթե միշտ դեպի ներքև ուղղված կեռ է (նկ. II, 4):

1) ա — ∞ ∞ 8

5) պ — Կ Կ Ճ

2) ո — △ △ ○

6) դ — Դ Դ դ

3) ս — ▽ ▽ ○

7) իլ — ի ○

4) Լ — ○ ○ ○

8) ոլ — ○ ○

նկ. II.

1) ալ — Լ Լ

4) ոսկի — ○ ○ Ե

2) ոպ — ○ Ճ

5) նոսր — 6 ○ ○

3) ոլք — ○ ○ ք

6) զուրն — Զ ○ ○ ր 6

7) սպիտակեսպի — օ Ճ 8 Լ Ե օ Կ

նկ. III.

Աղվանից ծածկագիր այբուբենի խմբերում կան ստեղծագործական որոշակի տարբերություններ, որոնք մտածել են տալիս աղվանական իսկական տառերի այլևայլ գրելաձևերի մասին: Այդպիսիք կան նաև № 9758 ձեռագրում: Օրինակ, այստեղ ա տառը երևան է գալիս երեք ձևով (նկ. II, 5): Եթե դրանցից

երկրորդը նման է հայկական պ-ին, ապա մյուսները բոլորովին այլ տեսք ունեն։ Այսուհետև, դ-ն նույնպես հանդիպում է երեք ձևով (նկ. II, 6)։ երկրորդը նման է հայկական դ-ին, մյուսները՝ ոչ։ Տարատեսակներով են հանդես դալիս և ուրիշ տառեր։ Մի՞թե դրանք մեզ նորից չեն հիշեցնում բուն աղվանական տառաձևերը։

Այս ժառկագրերում ևս իւր, ու հնչյուններն ունեն երկուական նշաններ (նկ. II, 7, 8)։ Նույն եղանակով երևան են դալիս նաև հապավումներ, սղումներ (նկ. III, 1, 2, 3)։

Որոշ տառեր № 9758 ձեռագրում որքան էլ նման են հայկականին, դարձյալ բնագրի ընթերցանությունը համոթյուն է պահանջում (նկ. III, 4, 5, 6, 7)։

Եթե որոշումները վերջնականապես համոզեն, որ հայկական ժառկագրության աղվանից կոչված տեսակների հիմքում ընկած են միայն բուն աղվանական տառերը, ապա, ի դեմս հայոց ձեռագրերում պահպանված այդ ժառկագրությունների, կունենանք աղվանական այբուբենի և նրա տարբերակների բավական հարուստ գանձ։ Իսկ եթե ապացուցվի, որ այդ այբուբենում օգտագործված են մասամբ աղվանական, մասամբ էլ հայկական ձևափոխված տառեր, ինչպես հունական կոչված ժառկագրության մեջ են հանդիպում հունականն ու հայկականը միասնաբար, ապա այդ դեպքում էլ աղվանական կոչված ժառկագրերի քննությունը կունենա կարևոր նշանակություն։

Համոզված ենք, որ ինչպես աղվանական այբուբենի հայտարարման գործում բացառիկ դեր խաղացին միջնադարյան հայ ձեռագրերը, այնպես էլ աղվանական կոչված ժառկագրերը կարող են օգտակար լինել այդ այբուբենի մասին ավելի մանրամասն տեղեկություններ ձեռք բերելու առումով։ Եվ դա միանգամայն բնական է, որովհետև հայ դպրության համար աղվանական գրերն ի սկզբանէ եղել են հոգեհարազատ, ուստի և տարբեր ձևերով ու նպատակներով տեղ են գտել նրա էջերում։

Թվում է ժամանակն է, որ առհասարակ հայկական բոլոր ժառկագրերը, այդ թվում նաև աղվանական կոչվածները, հավաքվեն ի մի և հանգամանալից ուսումնասիրությամբ հրատարակվեն առանձին հատորով։

ОБ АРМЯНСКОЙ ТАЙНОПИСИ И ОДНОМ РУКОПИСНОМ ТЕКСТЕ

А. Ш. МНАЦАКАНЯН

Доктор исторических наук

Резюме

Вид тайнописи, встречающийся в древнеармянской литературе и носящий название «албанский», именовался так в виду его связи с алфавитом кавказских албан. Неверно связывать его название со словом «ахавни» (голубь). Этот вид тайнописи был создан или полностью, или частично при помощи албанского (а возможно в некоторой степени и армянского) алфавита. Сходство шести знаков тайнописи с этими алфа-

витами уже доказано (см. жур. «Лрабер», 1971, № 10. стр. 66—72). В вопросе расшифровки этого вида тайнописи, как указали А. Анасян и А. Шанидзе, было бы полезно изучение прописных букв албанского алфавита, если были бы найдены их образцы.

Сходство изучаемого вида тайнописи с армянским алфавитом можно объяснить двумя причинами: а) Месроп Маштоц создал армянский и албанский алфавиты из одних и тех же элементов, по одним и тем же принципам; поэтому созданная при помощи албанского алфавита тайнопись могла иметь сходство также и с буквами армянского алфавита; б) тайнопись, именуемая «албанской», употреблялась армянами и вполне естественно, что последние при повседневном пользовании ею постепенно уподобляли ее знаки армянскому алфавиту, тем более, что албанская письменность уже давно была предана забвению. В этом аспекте значение данного вида армянской тайнописи, именуемой «албанской», еще более возрастает, ибо ее изучение может обогатить наши познания, касающиеся албанской письменности.

В связи с исследуемым вопросом, особого внимания заслуживает редкий текст, сохранившийся в рукописи № 9758 Матенадарана им. М. Маштоца, который является первым целостным текстом-трактатом (алхимического содержания). Он имел практическое значение и был изложен при помощи т. н. «албанской» тайнописи. Несмотря на то, что многие знаки этого текста выявляют сходство с армянской письменностью, однако ряд букв связывается с албанским алфавитом.